**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 17.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 պայմանագրում 2019 թվականի հունվարի 22-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

| | |
|---|---|
| Փոփոխության առաջացման պատճառ N 1 | ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 1515-Ն որոշում: |
| Փոփոխության նկարագրություն | Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցի տրամադրում: |
| Փոփոխության հիմնավորում | Պայմանագրի 8.5 և 8.14 կետեր: |

Պատվիրատու՝ *ՀՀ քաղաքաշինության կոմիտե*

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

**17.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 պայմանագրի**

ք. Երևան 22.01.2019թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Սնար>> ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ն. Սարգսյանի և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն՝ ի դեմս տնօրեն Հ. Մնացականյանի (այսուհետ՝ երկուսը միասին Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 21.06.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 17.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին.

1.1.1 Պայմանագրի 5.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<5.1.2 Պայմանագրի 1.3 կետով սահմանված ժամկետում և N 1 հավելվածով նախատեսված աշխատանքների դիմաց 2019թ. համար վճարման ենթակա գումարը կազմում է՝ **196 850 200 (մեկ հարյուր իննսունվեց միլիոն ութ հարյուր հիսուն հազար երկու հարյուր)** ՀՀ դրամ, որից **32 808 367 (երեսուներկու միլիոն ութ հարյուր ութ հազար երեք հարյուր վաթսունյոթ)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն>>:

1.1.2 Պայմանագրի N 2 հավելվածը լրացնել նոր օրացուցային գրաֆիկով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 1-ի:

1.1.3 Պայմանագրի N 3 հավելվածը լրացնել նոր վճարման ժամանակացույցով՝ համաձայն Համաձայնագրի հավելված N 2-ի:

### 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 2 (երկու) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

Համաձայնագրի հավելված N 1-ը բաղկացած 1 (մեկ) էջից և հավելված N 2-ը բաղկացած 1 (մեկ) էջից համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011864
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝

-------------------------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**

<<Սնար>> ՍՊԸ
ք. Երևան, Բրյուսովի փ, 19 շենք, բն. 9
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Կենտրոն Մ/Ճ
Հ/Հ 1150016851931912
ՀՎՀՀ 02646107

Տնօրեն՝

-------------------------- Ն. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**

<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ Անդրանիկի 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝

-------------------------- Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 1
17.09.2018թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 գնման՝ պայմանագրի
22.01.2019թ. կնքված N 3 համաձայնագրի

<<ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ*

**Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման**
**2019թ. հատկացված գումարների շրջանակներում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ**

**ըստ աշխատանքների ծավալների**

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների նվազագույն ծավալը (արտահայտված ՀՀ դրամով) | Աշխատանքների կատարման ժամկետը մինչև |
|---|---|---|
| 1 | 80 000 000 | 30.06.2019թ. ներառյալ |
| 2 | 170 000 000 | 30.09.2019թ. ներառյալ |
| 3 | 196 850 200 | 20.11.2019թ. ներառյալ |

**ըստ առանձին աշխատանքների տեսակների**

| N ը/կ | Կատարվելիք աշխատանքների անվանումը | Կատարված աշխատանքների ներկայացման վերջնաժամկետը |
|---|---|---|
| 1 | Մասնաշենքերի ուժեղացման աշխատանքների իրականացում, ներքին հաղորդակցուղիներ և ներքին հարդարում (մասնակի) | 30.06.2019թ. |
| 2 | Ներքին հաղորդակցուղիների համակարգերի (ջրամատակարարում, կոյուղի, օդափոխություն, էլմատակարարարում, հակահրդեհային համակարգ և այլն) կառուցման և ներքին հարդարման ավարտական աշխատանքներ | 30.09.2019թ. |
| 3 | Ներքին հարդարման աշխատանքներ, արտաքին հարդարում և տարածքի բարեկարգում | 20.11.2019թ. |

*** Շինարարական աշխատանքների տեխնոլոգիական հաջորդականությունը նախօրոք անհրաժեշտ է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:>>**

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011864
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
------------------------ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Սնար>> ՍՊԸ
ք. Երևան, Բրյուսովի փ, 19 շենք, բն. 9
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Կենտրոն Մ/Ճ
Հ/Հ 1150016851931912
ՀՎՀՀ 02646107

Տնօրեն՝
------------------------ Ն. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ Անդրանիկի 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝
------------------------ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված N 2
17.09.2018թ. կնքված
N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 գնման պայմանագրի
22.01.2019թ. կնքված N 3 համաձայնագրի

## <<ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*
### (բաժին 09, խումբ 06, դաս 01, ծրագիր 02)

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45611100/1 | Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքներ | - | - | - | 80 000 000 | 80 000 000 | 80 000 000 | 170 000 000 | 170 000 000 | 170 000 000 | 196 850 200 | 196 850 200 | 196 850 200 | 196 850 200 |

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:>>

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011864
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Սնար>> ՍՊԸ
ք. Երևան, Բրյուսովի փ, 19 շենք, բն. 9
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Կենտրոն Մ/Ճ
Հ/Հ 1150016851931912
ՀՎՀՀ 02646107

Տնօրեն՝ _______________ Ն. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ՝**
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ Անդրանիկի 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն՝ _______________ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 299-02
«21» 01 2019

**Բենեֆիցիար՝** ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
**Պրինցիպալ՝** «ՍՆԱՐ» ՍՊԸ

**ԵՐԱՇԽԻՔ**

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ երաշխիք) հանդիսանում է ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ բենեֆիցիար) հետ կնքված ՀՀ ՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով պայմանագրից բխող **«ՍՆԱՐ» ՍՊԸ-ի** (այսուհետ՝ պրինցիպալ) պարտավորությունների (այսուհետ՝ երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում (պայմանագրի ապահովում):

2. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ (այսուհետ՝ երաշխիք տվող անձ) անվերապահորեն պարտավորվում է բենեֆիցիարի՝ սույն երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ պահանջ) բենեֆիցիարին վճարել **19,685,020 (տասնինը միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար քսան) ՀՀ դրամ** (այսուհետ՝ երաշխիքի գումար)՝ պահանջն ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է բենեֆիցիարի կողմից նշված բանկային հաշվին փոխանցման միջոցով:

3. Սույն երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն երաշխիքից բխող բենեֆիցիարի՝ երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է 21.01.2019թ.-ից մինչև 31.03.2020թ.-ը ներառյալ:

6. Բենեֆիցիարը պահանջը ներկայացնում է երաշխիք տվող անձին գրավոր ձևով, ընդ որում պահանջում պետք է նշվի, թե պրինցիպալը որ պարտավորությունն է խախտել:

7. Երաշխիք տվող անձը բենեֆիցիարի կողմից ներկայացված պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, ապա բենեֆիցիարն իրավունք ունի երաշխիք տվող անձի բանկից պահանջելու երաշխիք տվող անձի հաշվից իրեն վճարել երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ բենեֆիցիարը ներկայացրել է սույն երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ և կից փաստաթղթեր, իսկ երաշխիք տվող անձը երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում երաշխիքի գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ բենեֆիցիարի կողմից սույն երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է բենեֆիցիարի պահանջը, եթե՝

1) պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն երաշխիքի պայմաններին.

2) պահանջը ներկայացվել է երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին տեղեկացնում է բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության Նախագահ՝ Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ Ն. Սարգսյան

# ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
**(պայմանագրի կատարման ապահովում)**

ք. Երևան «21» 01 2019թ.

<<Սնար>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Նարեկ Սարգսյանի (նույնականացման քարտ՝ 008538480, տրված 28.09.2016թ. 011 կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

## 1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ «ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2» ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետկանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետկանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև Ընկերության կողմից կնքված պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

**3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝**

<<Սնար>> ՍՊԸ
ընկերության անվանումը

ք. Երևան, Բրյուսովի փ. 19 շենք, բն. 9
ընկերության հասցեն

<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Կենտրոն Մ/Ճ
ընկերությանը սպասարկող բանկի անվանումը

Հ/Հ 1150016851931912
ընկերության բանկային հաշվեհամարը

ՀՎՀՀ 02646107
ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը

Նարեկ Սարգսյան
ընկերության տնօրենի անունը, ազգանունը և ստորագրությունը

Կ.Տ

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն՝) <<Սնար>> ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ Կենտրոն Մ/Ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ <<Սնար>> ՍՊԸ - 1150016851931912,

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 02646107

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ 02565827

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) 900005000758

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 26 585 450 (քսանվեց միլիոն հինգ հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր հիսուն)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝ N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

| 22.ա. Շահառուի ստորագրությունները | 21.ա. Վճարողի ստորագրությունները՝ |
|---|---|
| /____________________/ | /____________________/ |
| /____________________/ | /____________________/ |
| 22.բ. Կ.Տ. | 21.բ. Կ.Տ. |

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

| | |
|---|---|
| 24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>24.բ. Կ.Տ.<br><br>24.գ "___" ___ 20___ թ. | 23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն<br><br>/____________________/<br>/ստորագրություն/<br><br>23.բ. Կ.Տ.<br><br>23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ. |